Քիչ մը տող այս Աւետարանի մասին: «Բարձր Հայրի մանրանկարչութեան հետ սերտ աղերս ունի հայ միջնադարեան արուեստի եզակի յուշարձաններից մէկը՝ Թարգմանչաց Աւետարանը: Այս յուշարձանի տաղանդաւոր հեղինակը՝ Գրիգոր ծաղկողը, յուզակափ առաւելագոյն տպաւորութեան հասնելու համար դիմել է երփնագրի եւ գծային հնարանների հնարարքական միջոցների, որոնք շեշտուած արտայայտականութիւն են հաղորդում կերպարներին»: — Armenian Miniatures, 1984, էջ 35:

ԿԻՐՊԱԿՈՍ ՄԱՆՐՈՆԿԱՐԻՑ

(1200?—1270?)

Հռոմելայի տաղանդաւոր մանրանկարիչներէն մին է Կիրակոս: Մնած է Փթ. Դարու սկիզբը հաւանաբար: Իրեն աշակերտած է Վասիլ Ուռհայեցի: Կիրակոսի գրչական գործունէութիւնը կ'ընդգրկէ շուրջ քառարորդ դար (1239—1265): Զինքը Նախ քը տեսնեն Դրազարկ (1239), ապա Հռոմելայ (1244—1249) եւ ի վերջը Մաշկեւոր (1265): Այստեղ կը ներկայացնենք իր գործերէն շարք մը:

1. — Ճաշոց, գրած եւ ծաղկած է Դրազարկ. 1239ին, «Փ խնդրոյ երանիկ եւ սրբաւնեալ եափսկոպոսի տէր Գրիգորի՝ տեառն Կոստանդնայ դրան սարկաւագի»: — Զեռ. Վիեննայի, թիւ 63:

2. — Աւետարան, գրած եւ ծաղկած է Հռոմելայ, 1244ին, Կոստանդին Կաթողիկոսի պատուէրով: Այս ծեռագրի ծաղկագրումը կը յիշեցնէ «Կողիկ» Կոստանդինի 1193 թուին Ավետարայի մէջ ծաղկած Աւետարանը: «Այս փաստը եւս հաստատում է, որ Փթ. Դարի երկրորդ կէսի Կիլիկեան մանրանկարչութեան ոնց խարսխւում է

Փթ. Դարի վերջին քառորդում Սկեւայում մշակուած սկզբունքների վրայ» (Լ. Ռ. Ազարեան, Կիլիկեան Մանրանկարչ: Թիւնը, ԺԲ.՝ ԺԹ. Դարեր, էջ 98). + Զեռ. Վենետիկի, թիւ 151:

3. — Աւետարան, գրած եւ ծաղկած է Հռոմելայ, 1245ին, Կոստանդին Կաթողիկոսի «Դրան սարկաւագ եւ սպասաւոր Ստեֆանոս Եպիսկոպոսի համար»: — Զեռ. Կիլիկիոյ Կաթողիկոսարանի, Անթիլիսա, թիւ 8:

4. — Աւետարան, գրած եւ ծաղկած է Հռոմելայ, 1249ին, Կոստանդին Կաթողիկոսի պատուէրով: «Անուանաթիթերի ծեւաւորման բնագաւառում Կիրակոսը հանդէս է բերում արտակարգ գեղարուեստական զգացողութիւն: . . . : Կիլիկեան մանրանկարչութեան այն նրագեղի ոճը, որը բնորոշ գարծաւ հետագայի մի շարք այլ ծեռագրերին, հանդէս եկաւ համեմատարար կազմակերպուած ծեւուկ Կիրակոսի մօտ» (Ազարեան, նոյն, էջ 95, 96). — Զեռ. Երեւանի, թիւ 7690:

5. — Աւետարան, գրած եւ ծաղկած է 1226—1267 թուականներուն միջևի, Արմէոն Եպիսկոպոսի համար: — Զեռ. Chester Beatty Library, թիւ 613:

6. — Աւետարան, գրած եւ ծաղկած է Մաշկեւոր Վանը, 1265ին. — Զեռ. Երեւանի, թիւ 9509: Յիշտ. ԺԹ. Դարի, թ. 273:

ՔՈՐՈՍ ՌԱԿԻՍԼԻՆ

(1205?—1270?)

Մննդավայրին եւ ծննդներուն մասին ատոյց տեղեկութիւններ կը պակսին, բացի անկէ որ իր նախնեաց մականունն էր Ռաւալին: Կը յայտնէ թէ ունէր եղբայրներ, բոյրեր եւ որդիներ: յանուանէ կը յիշէ իր մէկ եղբայրը միայն՝ Անտոն: Ուսած կրնայ ըլլալ Հռոմելայի սէջ, գրլութեան եւ մանրանկարչութեան մեծ վարպետներէն Կլայնիցի Յովհաննէս սարկաւագի (1214—1263) մօտ եւս ի միջի այլոց: Իր գործունէութեան շրջանը, համաձայն հաստատում փաստերու, կ'ընդգրկէ 1256—1268 թուականները: Այս յշանէն ծանօթ են վեց Աւետարան եւ մէկ Մաշտոց, բոլորն ալ իրագործուած Հռոմելայի մէջ:

Թորոս Ռօսին իրքեւ մանրանկարիչ կը ցուցաբերէ աչքի սրութիւն, ծեռքի նարատարութիւն եւ անհուն երեւակայութիւն։ Ան ունի նոխ երանզապնակ՝ ճարուստ նրբերանզներով։ Ժուժկալ են իր նկարները՝ զերծ խնդորումէ։ Իր վրձնին ընտանի երեւոյթ մըն է երապաշտութիւնը։

Սոտորեւ կը ներկայացնենք իր գործերը ժամանակագրական կարգով։

1. - Աւետարան, գրած եւ նկարագրադած է 1256ին, Կոստանդին Կաթողիկոսի հրամանով։ - Զեռ. Երբեմն ի Զէյթուն։

2. - Աւետարան, գրած եւ նկարագրադած է 1260ին, Կոստանդին Կաթողիկոսի համար. - Զեռ. Ա. Թիւ 251։

3. - Աւետարան, 1261-2. գրած է Աւետիս քահանայ, Նկարազարդած է Ռօսլին, Լեռն իշխանին համար. - Զեռ. Ա. Թիւ 2660։

4. - Աւետարան, փոքր երկաթազիր, 1262ին գրած եւ նկարազարդած է Կոստանդին Կաթողիկոսի եղբօրորդի Թորոս քահանային համար, որ 1266ին նուիրած է զայն Արքակաղին Վանքին. - Զեռ. Բալթիմորի Walters Arts Galleryին, Թիւ 539։

5. - Աւետարան, գրած եւ նկարագրադած է 1265ին, Կեռան իշխանուհին համար. - Զեռ. Ա. Թիւ 1956։

6. - Մաշտոց, Աւետիթ քահանան գրած է 1266ին Սիսի մէջ, եւ Թորոս նկարազարդած է ի Հռոմէլայ, Վարդան Եպիսկոպոսի պատուէրով. որ ոզայուու ժամանակի սպասաւորէր հայրապետական սուրբ աթոռոյն։ - Զեռ. Ա. Թիւ 2027։

7. - Աւետարան, գրած եւ նկարագրադած է 1267-8ին, Կոստանդին Կաթողիկոսի յանձնարարութեամբ, Լեռն Բ. ի որդի Պր. Հեթումի համար. - Զեռ. Երեւանի, Թիւ 1067։

Մեծատաղանդ մանրանկարիչ՝ Թորոս Ռօսին իրաւամբ հոչակուած է «Հռոմէկայի դարոցի փառքը» (Գարեգին Արքապ. Յովսէֆինան, Նիւթեր եւ Ուսումնամիջութիւններ, Պրակ Բ., Նիւ Եորբ, 1943, Էջ 26)։

Վ Ա Ս Ի Լ Ո Ւ Դ Հ Ա Ց Ե Խ Ծ Ի

(1210 ? - 1280 ?)

Մնած է ժեկ. Դարու ակիզբը։ Եղած է աշակերտ կիրակոս Գրիի՝ ըստ Երեւոյթին Հռոմէլայի մէջ։ Իր գրչական եւ մանրանկարչական գործունէութիւնը կ'ընդգրկէ Երեք տասնամետակ, 1249-78։ Այդ ցըքանի իր Երկերէն կընանք յիշել հետեւեալները։


1 - Նարեկ, 1249. Հռոմէլայ։ Պատուիրատու՝ Կոստանդին Կաթողիկոս։ Գրիչ Վասիլ Ուռհայցի։ Կազմող՝ Վարդան քահանայ. - Զեռ. Երեւանի, Թիւ 6273։ Յիշատակարանը ժեկ. Դարի, Թիւ 200։

2. - Նարեկ, զ. 1266. Հռոմէլայ։ Գրիչ Վասիլ Ուռհայցի։ Պատուիրատու՝ Կոստանդին Կաթողիկոս. - Զեռ. Երեւանի, Թիւ 4965։ Յիշտ. ժեկ. Դարի, Թիւ 278։

3. - Աւետարան, 1278, Գոներ. Գրիչ եւ ստացող՝ Յովհաննէս Արքայեղբայր. ոի վայելումն աստուածաէր իշխանին Պարոն Ամբատայ։ Մաղկող՝ Վասիլ Գրիչ։ Կազմող՝ Առաքել Հնազանդենց. - Յիշտ. ժեկ. Դարի, Էջ 399։

Ն. ԱՐՔ. ՄՈՎԱԿԱՆ

(2)



ՀՐԱԶԵԱՑ ԱԺԱՌԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻՒԹԱՐԵԱՆՆԵՐԻՆ

Հրատակող՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

15.

[Նոր - Նախիջեան
1910 Դեկտ. 28]

Գերապատիւ

Հայր Ն. Ակինեան,

Նախ պատիւ ունիմ շնորհաւորել Նոր Տարին և Ս. Ծննդեան տօները: Կը մաղթեմ յաջողութիւն թէ՝ առանձնական և թէ Զեր իմքագրուկան գործերուն մէջ, Նամակիս հետ փաստ կը յանձնիմ բաւական ընդարձակ ծրար մը, որուն մէջ պիտի գտնէք Զեր ինդրած Մեր Զայնի պակոս թուերը, Ս. Մերորդի շարաւակութիւնը և երեք կտոր գիրք: Մեր Զայնի թուերը շատ զժուարութեամբ կրցայ ձեռք բերել, որովհետեւ լոմբագիրը այլ ես հոս չէ և բույր թերթերը իր հետ փոխադրեց է: ուրիշներ պակաս չէին: Վերջապէս Պր. Զամբինեանը իր հաւաքածոյէն հանեց և ինձ տուաւ: Ձեզ ուղարկելու համար: Հանդէսի յունվ: համարին մէջ տողիկ մը շնորհաւութիւն գնէք, լաւ կ'ըլլայ: Միւս երեք կտոր գրեթերը ինդրեմ հաճիք յանձնել Հ. Բ. Պիլցպիկենեանին՝ գրադարանի համար: Ներողութիւն որ ուշացուցի: Կ'ուղակէի բոլորը միասին ուղարկել:

Ս. Մերորդին ուղարկեցի մէկ գլուխ ես. այն է Դանիէլեան գրեթեր, որ բաւական ընդարձակ բան մ'եղաւ: բնագիրոց շատ աւելի կտրմ էր, բայց երբ ձեռք առի, կտոր մը հոս, կտոր մը հոս աւելցնելով՝ այդչափ բան գուրս եկաւ: Կը մնայ ևս երկու գլուխի: մին ասորի, պարսիկ: յօյն գրերու գործածութեան մասին մեր մէջ և երկրորդը բուն Մերորդին գրեթեր: Ասունծով այն ալ կը վերջացնենք:

Յօյս ունիմ որ յունվարէն սկսեալ Հանդէսը կ'ուղարկէք Պր. Զամբինեանին: մէկ օրինակ ալ իր փորձ, խնդրես ուղարկէք առ Պր. Ճէնանեան, Թիմ. Դպրանցի անունով. Nr. Djénanian, Séminaire arm. Nakhitchévan s/c Don:

Սերասահայէն Պր. Գարիկեան Զեղի յօդուած մը զրկեր է նշանադրերու մասօն: յօդուածը պատճ չէք՝ առարկելով թէ իմ պիտի տպուի: արդ նոյնը Մերուսապիոյ Նօրակ թերթին մէջ տպել տուեր էր: բայց պատգրութիւնը շատ զէշ ըլլալով՝ նորէն յօդուածը արտագրեր և ինձ զրկեր էր: Աւշադրութեամբ համեմատելով իմ ցուցակին հետ, տեսայ որ իւր 300ի չափ նշանադրերուն մէջ 25 հատ բուլորովին նոր բասեր կան, որ կը պակի ին իմին մէջ: ասկէ զատ կան նաև խումը մը նոր նշանակեներ (բասերը նոյն են, նշանաձեները ասարեր): Բոլորը միտօին եթէ հաւաքենք՝ իմ հրատարակած ցուցակին չ'ը կ'ըլլայ, այսինքն Հանդէսի մէջ էջէն քիչ մ'աւ պակաս: Արդ կը հարցնեմ թէ կ'ուղէ՞ք կամ կարելի՞ն է այս նոր նշանակերը հաւաքենք, իբր յաւելուած կցել նախորդին, մանաւանդ որ արտապութիւնը գեն վերջանած չէ: Կ'սպասեմ ձեր բարեհան պատասխանին:

Մաղթելով Ձեզ ամէն յաջողութիւն
մամ յարգանօք

Հ. ԱզԱՌԵԱՆ

¹ Նոր նախիջեանի մէկ Զայնը պարբերաթերթի խմբագրերը եղել է Եղիշեան Սալխան-խան (1866-1931), գիւղադիր, մանկավարդ և հասարակական գործիչ: 1903ին աբուրուել է նոր նախիջեան: իր թերթուն հակացարական յօդուածներ ապագրելու մէշագրանքը բանագրեսուել է 1909ին, որ Ա-ը չէր կարող բացայալութիւնը յաջնենէլ:

² Պարիկիան հարապէ (1861-1925), բառարանագիր, ազգագրագիտ, մանկավարժ: Արտ-պէտիան պարիկիան հարապէ (1861-1925), բառարանագիր, ազգագրագիտ, մանկավարժ: Արտ-

5. Հ. ԱՂԵՔՍԱՆԻՐ ՄԱՏԻԿԵԱՆԻՆ

16.

26 Հոկտ. 1913

Նոր - Նոյինիշեան

Գերապատիւ Հայր Մատիկեան¹,
Խմբագրապես և Հանդէս Ամսորեայցի,
ի Վիհեննա.

Զեր խնդրանքին համաձայն շտապ կերպով կազմելով նոր - Բայազէտի ձեռաւ-
դրաց ցուցակին յառաջարանը, ցանկը, գերմաններէն թարգմանութիւնը և տախտա-
կը, ապահովեալ ծրարով կ'ուղարկեմ Ձեզ այսօր։ Որպէսուե գրած էիք որ ընդ փոյթ
կազմեմ և ուղարկեմ յիշեալները, ուստի ես ալ ժամանակ չվատնեցի գրածներու
արտագրելու և երկրորդ օրինակ մը քովս պահելու՝ սրբագրութեան և համեմատու-
թեան համար. ուստի կը խնդրեմ որ երբ այսօր զրկած ձեռագրերու տպուին[ն], ան-
պահնաւ և ամեն պարագայի մեջ ալ ձեռագրերս իս դարձնեմ ինձիւ Հանդէսի նախկին
խմբագրինները սովորութիւն ունէին միշտ և ամէն ժամանակի թմ արտատպելիք գոր-
ծերու մէջ մ'ալ ինձ խրկեւ սրբագրութեան համար. և ես կ'ունենայի քանի մը կա-
րեսը սխալներ և կ'ուղղէի, Վերջերս զժբախտարար այս բարի սովորութիւնը դադ-
րեցաւ և ես ստիպուած կ'ըլլամ գրածները երկրորդ անգամ ալ արտագրելու և քովս
պահելու, ինչ որ ժամանակի մեծ կորուստ է, ժանաւանդ ինձ համար, որ բացի
ընտանեկան գործերէ, օրինա հինգ ժամ դամ դաս ունիմ. և այլ ես ինչքան ժամանակ
կը մնայ գրական աշխատութիւններով պարապելու։

Նոր - Բայազէտի ցուցակին ինձ վերադարձուած է թ. 1-7, 11-17 ձեռագիրնե-
րուն նկարագրութեան ընտակիրը. Ցացեալը ամբողջապէս ձեր քով կը գտնուի. ինձ
ուղարկուած չէ. Ուղարկուած մասերը ես ալ համեմատած և սրբագրած եմ և այս
մասերուն արտատպութեան մէջ ապագրական սխալներ չկան։ Մնացեալներուն մէջ՝
որ ես տեսած չեմ, Աստուած թմ, այս ինչքան և ինչպիսի սխալներ սպազած են,
թանի մը օրինակ տամ։

— էջ 17ա, տող 2. տպուած է աղամեն. պիտի ըլլայ պպ (803) ունէնա,

— էջ 20, տող 3 (վարէն) — սկզբնատառերը են. ինչ դոյն են չէ ըստուած.
Ակբբնատառերը ըստուած և թողուած է։

— Նոյն էջ, տող 1 (վարէն) կ'ըսուի թէ խաչը ունի 3 բիս. չեմ հասկնար թէ
խաչին թիւը ինչ բան է. թիւ պիտի ըլլայ արդեօք։

— էջ 21ա, տող 5 (վարէն), էջ 07 բ (քանի բսել կ'ուղղէ)։

— էջ 28, տող 17 (վերէն). Աւետարանին բազմադակութիւնը էջերով յիշուած
է. Մատթէոս, Մարկոս կայ. յանկարծ 146 էջէն կը թատէ 224. Պուկասի մասին
եղած տեղեկութիւնները փախցուցած է. ձեռագիրս քովս չէ որ ստուգեմ և գտնեմ
պիտի ըլլայ, գդիտեմ։

— էջ 29ա, տող 1 վարէն. սիւնակներուն մեծութիւնը գրած է 9 երկայնք,
16 լայնք. կրնա՞յ այսպէս բան տեղի ունենաւ. ինչպէս պէտք է ուղղել, չգիտեմ։

— էջ 29բ, տող 2 (վարէն), տողերուն թիւը գրած է մէկ էջի մէջ 121 թիւն
պիտի ըլլայ, գդիտեմ։

— էջ 31ա, տող 11 (վարէն) կը յիշուի Խոսրով Ցորցակեցի նոր վկայ մը.
այսպիսի նոր վկայ կա՞յ որ, ինձ ծանօթ չէ,

— էջ 44ա, տող 2 (վարէն). ձեռագրի նկարագրութեան մէջ կ'ըսուի Մեծու-
թիւն՝ մակուր. չափերը փախցուցած է. ես ինչպէս գուշակեմ. գերմաններէն թարգ-
մանութեան մէջ ալ տեղը բաց ձգեցի։

— էջ 46ա, տող 8 (վերէն). գատարկ Թուղթերուն մէջ կը յիշուի էջ 138 ա-
272 բ. ուրեմն 140 թիւր պարմպ է թողած. անկարելի բան է. բայց ինչպէս պէտք

Այսպիսի սխալներ գետ շատ ու շատ կան են ամէնէն հետաքրքրականները ցոյց տուի, անտոնկ որ տուանց ձեռագրի համեմատութեան անկարելի է ուղղել Յիշ շատակողութեանց մէջ խիստ չտա տեղեր կան, ուր կ'զգամ թէ ակնյայտնի սխալ մը կայ, բայց անկարող եօ ուզ ել, օրովհետեւ բնագիր չունիմ, Այս բոյորը ի նկատի ունենալով, Թախանձագիրն կը խնդրեմ Ձեզմէ, Հ. Մատիկեան, որ փառէք իմբրադրութեան հին թուղթիրուն մէջ և ինչ որ գտնէք ձեռագրէն, այսօրուան ուղարկած ձեռագրերուն փորձերուն հետ բարի ըլլամ թնձ ուղարկելու ապահովեալ, որպէս զի ես ալ կարող ըլլամ գտնէ զրիպակներու ցանկին մէջ սխալները ուղղելու։ Meilletի խորհրդով յատուի ժամադրութիւն դարձուած էի ես յատկապէս ձեռագիրներուն մէջ գտնուած ժամանականներուն վրայ, որպէս զի անոնց քննութեամբ կարողանայինք երեան հանել որ մը հայերէն տառերու յետին ննչափիխութեանց օրէնքները. արժմ որ այլ ևս անկարելի է գտահիլ ճիշտ ապագրաւած բլլալուն վրայ, մեռաւ աշխատութիւնու ինչ կրնամ ընկեր

Հասծներէս կ'երևայ որ ցուցակ բոյորովին աւերտած չէ. դեռ վրիպակներուն նոխ ցանկ մը ունինք պատրաստելու, որ սակայն գլխաւորապէս ձեզմէ կախուած է Անուններու ցանկն ալ ամբողջ թիւէ ու տառէ բազկացած ըլլալով, ևնթակայ է բազմաթիւ վրիպակներու և պատրական սխալներու. Օրինակի համար, Թաւրիզի Զեռ. ցուցակին ցանկը երբ տպեցին, ևոն ալ Ծիրացու յատուկ անոնց գուրու ձգեր են ցանկէն. և որովհետեւ թիւրիզ պիտ օրիցաց բառը նաև հասարակ անուն է, չդիտ զոյզ զիս պիտ գտասպարտէ և ըսէ թէ Աննուեանը չէ կրցեր որոշել թէ այս տեղ Ծիրացու բառը մարգու յատուկ անուն է և ոչ թէ հասարակ անունն Ներկայ ցանկին մէջ ալ Տերեկ յատուկ անուն մը կայ. կը խնդրեմ որ յատուկ ուշագրութիւն դարձնէք առոր վրայ և սխալմունք կարծելով գուրու չանէք ցանկէն։

Հետոյց գրերը աշխատաւթիւնս ալ շատ անբախտ գուրու եկաւ. այս տարի յարելեանական տարի էր. Խնչպիսի յարմար գէպէ եր. եթէ ոպէիք ժամանակին և կարող ըլլայինք այս տարի վերջացնել, ինչ աղէկ կ'ըլլար. Զեզի զեզ ամիս տառչ Հայկական մը իրկած էի, որ պատասխան մ'էր Տր. Թիրեաքեանին մէկ գրութեան. այսուեակ գրութիւնները՝ որ մէկը մէկուն պատասխան մը կու և ձեր գրածին համաձայն դեռ ևս 3-4 ամիս սպասենք, գրեթէ տարի մը յետոյ գրուած պատասխանը ի՞նչ արժէք ունի. արդէն ենցինակն ալ իրեն ըստեց մուցած կ'ըլլայ. Դուք, փօխանակ այսօպիսի տաօրիայ նշանակութիւն ունեցող բան մը (որ արդէն մէկ երեսուն բան ալ է) որը որին տպելու տարի մը կը ձգձգէք, մինչդու անդին Ա. Ցակորեան հիւանդանուցին պատմաւթիւնը, որ ոշիարէիս ամէնէն անհետագրքական բանն է և ինչքան ալ ուշ ապաւի անունն աւ ապաւի (օր. 100 տարի յետո), այնքան աւելի հետաքրքրական կ'ըլլայ, կ'եւլէք և ամէն ամիս տասնեակներով սիւնակներ կը լեցնէք. Թաւ լիցի ինձ, որ Զեզ ճանապարհ ցոյց տամ. արդէն այսքան փոքրիկ նկատողութիւնն ալ գուց յանդգնութիւն է իմ կողմէս, բայց մի մոռնաք որ ես ալ տար չեմ. 1896 Բուէն.ի վեր հանդէսի մէջ եմ. Վիեննական ո'ր հայրը որ տեսած եմ, զիս իրենցմէ յորչորջած է. վկայ Թող ըլլան Գոլսոյ Վիեննական վանքի պատուական հայրերը (ժամանակ պատկառելին և իմ յաւէս սիրելին Հ. Թովման կէտիկնեանը), որով շարունակ կը հրատիրէին զիս այս ամառ իրենց վանքը, Երևանթիւն կուտային ինձ աշխատելու, ուղածիս պէս օգտուելու իրենց մասնադարանէն են, ու զիս իրենց մարդը կը կոչէին. Այս տեսակէտէն նայելով ինդրին, թո'զ ըսածներու ծանր չերեան, այլ միշտ միայն Հանդէսին աւելի լաւը ցանկանալու ջերմ փափաք մը:

Անցեալ օրեր Հ. Գիէզիկնեանէն թուզը մը ստացած էի, որուն մէջ կը գրէր թէ Գրիշ Թերթը ամբողջ չէ ուղարկուած. պակասները կ'ուզէք որ գտնեմ և զրկեմ. բայց գրքախտաբար չէր ըստ թէ պակաս թուերը որոնք են. կը խնդրեմ որ կամ բայց գրքախտաբար չէր ըստ թէ պակաս թուերը որոնք են.

երկողով մը և կոմ Հանդէսի Նոյեմբերի թղթակցութեանց մէջ երկու բառով յիշեցնէք ինձ և իսկոյն կը զրկեմ:

Թանի մը անգամ գրեցի Զեզ թէ Հանդէսը այս տեղ շատ անկանոն կ'ստացուի. առաջ ալ այսպէս էր. բայց երբ պակասները կը յայտնէի, կ'ուզորկէին: Խմ պակասները ուզորկցիք, չնորնակալ եմ: Բայց Թաղաքային գրադարանին, Դպրանոցին և Պր. Զամինեանի պակասները չուզարկեցիք: Այս գրագային գիտցէք սակայն որ բաժանորդ պիտի կորսնցնէք: Թաղաքային գրադարանը արդէն կը ուստական հաստատութիւն մ'է, հայերէն թերթ քիչ կայ կարգացող. գրադարանի վարչութիւնը կ'ըսէր թէ Հանդէս կարդացող մեկ հոգի ալ չկայ (ճիշտ է, որովհետեւ Հանդէսով հետաքրքրութեան կամ տառեծին բաժանորդ են, ինչպէս ինձ պէս և Պր. Զամինեան, և կամ Դպրանոցին գրադարանէն կ'ստանամ) և կ'ուզէր որ այլ ևս չնչէ թերթին ստացումը: Շատ խօսեցայ ես և համազեցի թէ Հանդէսը լրագիր չէ, կարգացող անշնչաց չպիտի ուսնենայ, բայց արդարք գիրք միշտ պէտք է ապագայի համար են:, եթէ պակաս համտուները շարունակեք չզրկել: Կը վախնամ որ բոլորովին գաղրին բաժանորդ ըլլայէ: Պարոն Զամինեանն ալ չսրս թիւ ստացած չէ: այս է Յուլիո-Օգոստ. - Սեպտ. և Հոկտ.: Այս թուերը սակայն եթէ զրկէք, իսկդրեմ իմ միջոցով մի զրկէք, որպէս զի վրաս կասկած չըլլայ: թէ Ես կ'ստանամ, բայց չեմ յանձներ իրենց:

Առնարի յարդանագ Հ. Ազնվենելին

Հ. Ազեմանիր Մատիկեանը (1866-1930), բանասէր, եղել է ՀԱՀ իմրադիրը 1913-1920 թթ.:

² Զեռագրացուցակի մեր սուսպամբ պարզեց, որ ԱՀ-ի նշան վրեպահները մնացել են առանձնատիպում էլ, և վերջամ վրեպահների ցանկ չկայ:

Թեր, թուրք, հակառակի:

⁴ Ցորեանական տարի. 1913թ նշանը է հայերէն գրերի գիւտի 150ամեայ յաբեկանը, ուրվեան այն ժամանակ կ նկատուած էր 413 թաւականը, այժմ՝ 406: Նայն տարին տառեւնը է հայերէն տաղագրութեան 400-ամեակը:

⁵ Հայկականը, ՀԱ, 1914, թ. 8-9, էջ 563-566. Նախ խօսում է տարածական բարձրագույն արդարադատութիւնը և թ. Յ. Թիրեաքեանի բարակադարանը, բերմանար կամ պարագան որրոշթեանը, բայց թունում է ամփափոն, որպէսուան բազմաթիւ անդամ նոյն ուղղագրութեամբ է գործածուել:

⁶ Թիրեանակ Ցարարին (1845-1919), բժիշկ, բանասէր, լեզուուրան, բարուրանագիր, թարգմանչ, աշխատաւթիւնների հեղինակ՝ Արքանայ բառարան» (1920), ուր սուսպարաննել է հայերէնի պարեական փախառութիւններ: ՀԱ-ում ունի բառաքննական գիտութիւններ, որուցից է հնիերակ, տարածական (1912 թ. 7, 424-428):

⁷ Հ. Խանակ Մատիկեան (Անտոնեան միաբան), «Յ. Ցակոս ազգային հիւնգանաց», ՀԱ, 1911-1914:

⁸ Նամակի ոկշում եղած անունից յառակ երկում է, որ այն ուղղուած է եղել Հ. Ա. Մատիկեանին, իսկ Հ. Ն. Ակինեանը ՀԱ, 1953, էջ 449 ում գրել է. «26 հոկտ. 1913 կը գրէր ինձ (Ընդդաւմբ մերն է) Անասեան նոր-նախիշեանէն: ԱՄ մասնաք որ ես ալ սոսր մը եղած չեմ: 1896 թուեն ի վեր Հանդէսի մէջ եմ ... կը գուէին»:

⁹ Անը 1896ից է սկսել աշխատակցել ՀԱ-ին:

(Ցարաւնակելի՝ 8)

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍՍԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՐԱՔ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

**Կ. ՊՈԼԱՍՈՅ ՅՈՎԱԿԻՄ ՊԱՏՐԻԱՐքի
(1438-1478)**

Յովակիմ Պատրիարքի անունը պատմութեան մէջ յիշատակուած է չորս առաջնակակի առքիներու ընթացքին, այսպէս.

1. — 1438. — Յեղար արքայոց Տրապիզոնցի Զետանադրութեան Գիրք մը որդինակած է ոք վայելում Արքեղիսկոպոսուն ոէր Յովակիմին կոստանդնուպոլիսից. — Պատմ. Կթզ. Կիլիկիոյ, 1939, Անթիմոս, էջ 28:

2. — 1445. — Արձանագրութիւն մը գրուած է Թէօթակիս, ոի հայրապետութեան անուն Կարապետին և յեղիսկոպոսութեան անուն Ովակիմայ». — Էջմիածին, 1963, Դ. էջ 30:

3. — 1447. — Մտեփանոց Երէց Սուեցի. Անկուսիոյ մէջ յիշատակարան մը գրուած է, ուր կան հնակեալ առղերք. «Ծրբցաց յիշատակարան» . . . ի ժամանակո քաջ նովուսպետին մերոյ աէր Յովակիմայ, որ է այսուր վերատեսուչ նախանդիս Պուրոտյու, և Կաստանդինուպոլիսի և առհմանեալ վիճակին իւրոյ, և է այր ի ժամանուն և հնանուրեղ — Թիշա. Ժե. Դարի, Բ. Մասն, էջ 409-410:

4. — 1461. — «Կարդ և թիւ Պիւ Պատրիարքցն Հայոց, որք նասան ի կոստանդնուպոլիս մի զիսի միոյ, զիսի առան մեծի քաղաքիս ի առնեաց» Խորագիրը կրող Պատրիարք մէջ առաջինը գրուած է Յովակիմ, այսպէս. Ժուլին Հայոց 910 [= 1461] Յովակիմ Եպիսկոպոս, զոր ի Պրուսայու հանդերձ ժողովրդովք երկր Ֆէթի Սուլթան Մէկէմմէտան ի Կոստանդնուպոլիս. — Ցուցակ Ձեռ. Ա. Յակոբոս, Բ. Հատոռ, 1967, էջ 401-402:

Կարդէ ուշադրութեան անել որ 1447էն 1461 կայ 13 առքիներաւ երկար ժիցոց մը, ուր չենք հանդիսիր Յովակիմի յիշատակութեան: Ժամանակի այդ ժամանածք նշանառը է պատմական մէծ

կարեւորութիւն ունեցող դէպքով մը, որ է Կ. Պոլասոյ գրաւումը Թուրքերու կողմէ և վախճանը թիւ զանդական կոյսրութեան (1453):

Միւս կողմէն ծանօթ է Ամբրոսվլաթի Ուսումն թէջկութեան կաշուած գրքին յիշատակարանը, ուր կը կարգանք. «Գրեւաւ թագաւորական թէջկարանն ի թվականութեան Հայոց Ձէլ (1459) ամին . . . ի ժաղաքին կոտընդինույթաւի . . . ի կաթոլիկոսութեան Հայոց աէր Գրիգորաց, և ի հայրապետութեան աէր Մարտիրոսին կոստանդինոյաւուլու վիճակին ։ Թիշա. Ժե. Դարի, Բ. Մասն, էջ 115:

5. — 1469. — Ամբրոսվլաթի իր Սպաւաթէկութեան երկին մէջ արձանագրուած է հետեւալ տօղերը. «Այսպէս գիրմն չինցի ես . . . ի մայրաքաղաքն ի Ըստամիաց, ի Թագականութեան Հայոց Ձէլ (1466) ամին . . . Թարգմանեցաւ պատուական թէջկարանն ի մայրաքաղաքն ի Ըստամիաց, որ Թարգմանի Ֆէթիկիմայ, ի Թագականութեան Հայոց Ձէլ (1469) ամին . . . ի կաթոլիկոսութեան աէր Յովակիմին»: Ա. Կապիկութան աէր Յովակիմին. — Թիշա. Ժե. Դարի, Բ. Մասն, էջ 285-286:

6. — 1474. — Աւրիշ յիշատակարան մը, գարձեալ Ամբրոսվլաթի կրչէն, «ի տաճիկ լեզվէ ի հայ լեզու իր կողմէ Թարգմանուած Ռամկահան Գիրքը հը թուագրէ Հայոց Ձէլ (1474) ամին, [ի] Հկաթողիկոսութեան աէր Սարգսին և ի հայրապետութեան աէր Յովակիմայ արհիկանիսուսին՝ ի մայրաքաղաքն ի Կոստանդինոյաւուլին»: — Թիշա. Ժե. Դարի, Բ. Մասն, էջ 357:

Յովակիմ Պատրիարքը իր պայտանին վրայ էր մինչև 1478- Ալդ ասրին է որ Նիկողայոս Եպիսկոպոս կը յիշատակուի Երբեկ անոր յաջորդ. — Ցուցակ Ձեռ. Ա. Հատոռ, էջ 402:

Թէ Նիկողայոս Եպիսկոպոս կը վարէր պատրիարքական իշխանութիւնը 1478ին, զի հաստատուի Ամբրոսվլաթի Անդիտաց Անպէտ երկին Յառաջարան-յիշատական բանով, գրուած ոք կաթողիկոսութեան իշմիտանայ անուն Սարգսին և ի հայրաքանութեան մայրաքաղաքին Կ. Պոլսի աէր Նիկողայոսին և ի Թագականութեան

ՄԱՍԻՆԻ ԱՐ ՊԱՏՄՈՒԳԻԹԻՒՆ

Ս. ԿԵՐԱԿՈՒ ՎԱՆՈՒՑ ՍԵԲԱՍՏԻՈՑ

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագ Դիբողութեան Տեառն Անուիրայ, Ասիակայ, եւ Ասուածատերոյ Արհի - եպիսկոպոսաց եւ վասն նահատակութեանց ոմանց Աթրաւացւոց ՚ի Կոստանդնուպոլիս

Եթե գաղճանի Մելքիսեդէկ Գ. Արքը եպս. ն քաղաքիս Սերաստիոյ, ն սուա ՚ի տեղի նորին՝ Անանիս Արքեպիս. Սերաստացի, այր խոնարհագնաց և տուքինի վարուք Յաւուրո սորտ եղեւ առանձին Առաջնորդ Ս. Հրեշտակապետի վանիցն՝ Յակոր Վրդպա. Աստանցի, աշակերտ Մելքիսեդէկ Գ. Արքեպս. ի Նոտէր և յաւուրո յայսոսիկ ՚ի Ս. Անապատի Վանս այլ ոմի. Անանիս Վրդպա. ուրոյն Առաջնորդութեամբ (Աւանդի ՚ի ծերոց), Կացեալ յԱռաջնորդութեան Քաղաքիս Տեառն Անանիս Արքեպս. ի ամս իրք երկուառան ժամանեալ ենաւ յաւուրո ծերութեան: Եւ եղեւ զի եկն՝ ՚ի քաղաքս ընդ այն ժամանակո գործով ժողովարարութեան՝ Յանակ անուու վրդպա. օմի Կեսարացի, որ գորով այր ճուռամախօս և համոզարան յանկոյց առ ինքն՝ զսիրա մհեմենաց քաղաքիս, արք և բազմակնիք զրութեամբ դիմեցին առ Պատրիարքին կ. Պոլսոյ Մատթէոս Արքեպս. և հանեցուցեալ զնաւ առին հրաման Արքունական և զկոնդակ Պատրիարքական յանուն Սահակայ, նստուցին զնա յԱթոս. Առաջնորդութեան Քաղաքիս: Եւ ելեալ Անանիս Եպո. ՚ի յԱսեան մեծի Եկեղեցւոյ, յետ բազում ողջամիտ քարու-

զութեանց՝ եւորց ցողովուրդն երից անգամ թէ զվասն է՞ր և առկա որպիսի յանցանաց զրկեցիք զիս ՚ի Տիշութենէն և ո՛չ ոք ես նմա պատասխանի՝ զի չունէր ինչ, բայց եթէ ո՛չ ուտեր և ո՛չ ըմպեր ընդ նոսու և պատ առաց. Ալյուպէս լուս մնացիք և ելեալ գնաց այլ ուր, և Սահակ Կեսարացի կացեալ յԱթոս ամս իրք և սրին, կողովակեաց զժողովուրդն ըստ արժանաւոյն և ժողովեալ զանօթու եկեղեցւոյն և թողեալ բազում պարտ գնաց ո՛ւր և կամեցաւ ինքն (ԾՃՄթ = 1680), եւ ո՛չ ոք առաց նմա ինչ, կարծելով եթէ գործ առնու, վասն որոյ լուս կացին և մնացին ըստ բանի Անանիք Եպո. ին, և Սր. Յունս մնաց թափուր յընչից և ՚ի Տեսչաց, անկեալ ՚ի ներքոյ յորով աւկոսաւոր պարտուց. Ազա յետ քանի մի ամաց սթափեալ ՚ի թմրութենէ տիմարութեան և ՚ի մի խորհուրդ միաւ բանութեան ժողովեալ քահանայից և իշխանաց վիճակիս, համաշռունչ հաւանութեամբ ընտրեցին և եղին Տեսուչ Սերբաստիոյ ՚ի վանս Ս. Նշան զայրն անուանի Աստուածատօր եպո. Սերաստացի Թմրուկ կոչեցեալ (ԾՃՄ = 1701), Սա ՚ի չորրորդ ամի Տեսչութեան իւրոյ, ժողովեաց առ ինքն զգլիաւորս Ազգիս մերոյ, զԱռաջնորդն Ս. Հրեշտակապետի զԱնձատուր Վրդպա., զՅակոր Վրդպա. Ս. Անապատի, զԱւագերէց Քահանայս ըզ-Տէր Եռվակի և զՏէր Դաւիթ, և զայր իշխանուն, և խորհուրդ արար ընդ նոսա վասն նորագութեան Սրբոյ Եկեղեցւոյս,

Հայոց Զիկ (≈ 1478) — Յուցակ Զեռ. Արքաւի Վանքին, 1962, Վենետիկ, էջ 329:

Արդ. զերոգրեալ տուեալներուն հարժակայն, Յաղակիմ կ. Պոլսոյ արքեպիսկոպոս է 1438—1447: Ազա կու գայ քանակակ մը տարիներու պնորոց շրջան մը:

Կ. Պոլսոյ վիճակին Հայրապետն է Մարտիրոս Եպիսկոպոս՝ 1459 ին: Յովակիմ Եպիսկոպոս իրք կ. Պոլսոյ վիճակին հոգեոր պետ ընդունուած է 1461 ին և մնացած այդ պաշտօնին վրայ մինչև 1478, երբ իրեն կը յաջորդէ Նիկողայոս Եպիսկոպոս:

Ն. ԱՐԲ. ՆՈՎԱԿԱՆ

որ յԱնուն ամէնօրհնեալ Ս. Ածածնի կառաւցեալ է 'ի Մայրաքաղաքիս Սերաստիս' յորում ամենիքին միակոմ հաւանութեամբ և մեծանիք ջանիւ փութացեալ հանցուցին զմեծամեծ այլազգեաց Քաղաքիս, և 'ի ձեռն նոցո զբդէշխն. և տակեալ զերամանագիր 'ի 13 Օգոստոսի, սկսան նորոգել, շինել, զարդարել ըզնացեալ, զփակեալ և զփախտեալ տեղիս Սրբոյ եկեղեցւոյ. և աւարտեալ զշնուածն արարին մեծանանդէս նաւակատիս 'ի փառս Աստուծոյ և 'ի պատիս Սրբունոյ կուսին Մարիամու (Ոճ՛Ռ՝ = 1705, Կոնդակ և Տումոր), Յետ երից ամոց եղե 'ի քաղաքիս սաստիկ ժամախտ և մահ տարածամ. և մեռաց անթիւ անձինք 'ի քրիստոնէից և յայլազգեաց և ազս զօրութեամբ սքանչեանրաց Ս. Նշանի 'կենաց Փայտի, և շնորհիւ գերազոյն սրբոց մասանցն բարձաւ ման այն (Պատմ., Ոճ՛Ռ՝ = 1710). Յաւուրոյ յայսոսիկ նահատակեցաւ 'ի կ. Պոլիս Աստուծառուր ոմն Սերաստացի, որ էր որդի Անմեղուկեան Պաղտաստրի և Թուրքանայ, և ուսեալ զարուես ոսկեգործութեան՝ մտեալ էր 'ի կորդ աշխարհի: Եւ եղել զի սակա վաճառկանութեան չոգաս 'ի կ. Պոլիս և իրեւ ենաս 'ի Ղալաթիս՝ սմանք յայլազգեաց տեսնեալ զնս ժպտիւ տան ցնա հայր դու յո՞ր Աղդէ իցես, և նա ասաց. Քրիստոնեայ եմ և յԱղդէն Հայոց տան ցնա. ասպա վասն է՞ր զգեցեալ ես հանգերձ՝ որ վայել է Ցաճէի, տասց Սուրբն, վասն զի ի հանապարհէ եկած եմ: Յայնամ կրծեալ զատամունս իւրեանց 'ի վերայ սրբոյն, և գրու տուեալ միմեանց տարան զուրբըն առ զատաւորն և կացուցին վկայու ստախօսն՝ յանել թէ՝ լուաք զդժանէ լինել ընդ օրինօք մերովք և 'ի հարցանել դատաւորին, տասց սուրբն. «Ես քրիստոնեայ եմ և ծառայ Ք. ի», և նոքան տարաբանութեամբ հաւանեցուցին զԴատաւորն և նա ես արկանել զնս 'ի բանտ, և պնդել զոտս նորս 'ի կոճեզու և նեղել զի սուրացի զԲա. ։ Եւ 'ի վաղիւն տարան զնս առ փոխ-արքայն և նա բառ զում ողոգանօք և խոստամբ ընչեց և պետական իշխանութեան, ջանաց հաւանեցուցանել զնս և ո՞չ կարաց, վասն

որոյ ետ արկանել զնս 'ի բանտ, ուր եկաց զառուրս 32 կրելով դառն կտտանս չարչարանց, և ապս իջուցին զնս 'ի կողմն մանապարտից և հանապազօք տանէին առաջի դատաւորին և հարցանէին թէ ռուրանա՞յ զԲա. և նա անվեներ գաւանէր զԲա. Աստուծալ և յետ վեց աւուրց հտուն զճիր զնմանէ զի գլխատեսցի և առեալ զանձապետն տարաւ զնս 'ի տեղի կտտարման: Էր և 'ի բանտին այր ոմն՝ Անուն անուն որ էր նոյնպէս Սերաստացի, որ սպանեալ էր այր մի և 'ի ժամի ունէր ուրանալ զԲա. Եթէ ոչ կարացցի փրկիւրիկ սուրբըն յորդորական բանիւք ասէ ցնա. ես եղէց քեզ երաշխաւոր յԱմենին Ք. ի. զի ո՞չ կորնչիս, միայն վասն հաւատոյդ յանձն ա՛ն զման և այսպէս հաւատեաց զայրն յո՞չ սւրանալ զԲա. և եկին 'ի տեղի սպանման, հառաչեաց սուրբըն և ասաց գանձապետին, նախ սպան զդա, զի կարծեաց թէ յետ այնը հաւանի սուրբըն կամաց նոցա, զայս արար, զի մի տեսէց զգիխատումն իւր և երկուցնեալ սուրացի զԲա. ապս ասաց սրն. հա՞ս և զգիւրի իմ, և գանձապետն յետ բազմիցս ջանալոյ դարձուցանել զնս 'ի հաւատոյն Ք. ի, իրրի ետես եթէ ոչ հաւանի, ետ գլխատել և զնա, և հաւատացեալքս տըն-եալ կաշտաս առին զմարմինս և եղին 'ի պատշաճաւոր տեղւոջ, յորդէ բազում նշանք բժշկութեան լինին և տօնեցին 'ի կ. Պոլիս զԾօն Ածառոյ նահատակին 'ի փառս Ք. ի Ա. մերոյ 'ի 13 Դեկտեմբերի Ոճ՛Ռ՝ = 1710. 'ի սմին ժամանակի յոլով յիշտակս եղին 'ի վանս Սրբոյ նշանիս՝ մեծափոյթ չանիւք և աշխատութեամբ Ածառոյ Արքեպոյ. 'ի թմփուկ կոչչեցելոյ. որ ցանկայր որչափ հնչ իցէ լուռ զգակառութիւն Ս. Մենաստանիս, և յօրդուէր զգողովուրքն, որք և ամենեալին փութային 'ի նոյն: Որպէս 'ի կ. Պոլիս եղեալ Սերաստացի մերազնեայք թէ բնիկք և թէ հիրք, հանգանակութեամբ զողորմութիւնս հաւաքեալ այլ և այլ թանկադին յիշտակս լինցին 'ի Ա. Մենաստան (Ոճ՛Գ՝ = 1714 — Կոնդակ-Ծումար), յորս գերագոյն հանդիսացան վարպետայք արկիր արենատարաց՝ որք էին 81 անդրկիր արենատարաց՝ որք էին 81 անդրկիր արենատարաց՝ որք էին մի արծաթ ձինք, որք ետուն չինել ջան կարաց, վասն

**ՀԱՄԱՊՈՏ ԵՒ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՄԵՐ ԵՒ ԳՈՅՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՏՕՆՍՑՈՅՑԻՐՈՒՆ, Վ.Ր.Ց.Ց
ԵՒ ՍԱՂԻՄԱԿԱՆ Ա.Ի.ԱՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հոգեգդալստեան յաջորդող հինգերորդ եօթնեակի Հինգչուրթի օրը կը յիշտակաւին մեր երէց թարգմանիչները՝ Սահակ և Միւրով (շանզուգական զոյգը՝՝ Դուրեան Պատրիարքի սրամիք սրակումսվ): Զենք գիտեր թէ ինչո՞ւ և ինչպէ՞ս հրամայուած այս տօնին համար յատկացուած է Շարաթէն առքեր օր մը: Աւելի իր նախատօնակը, ինչպէս նաև Տօն ազգային բացարութիւնը: Մայր Հայրենիքի մէջ տօնը կը հանդիսաւորուի գեղի Օշական գիւղ՝ Ս. Միւրովի հանգստարանը կատարուած աւխտազնացութեամբ: Երուաղէմի մէջ ատենօք այդ օր հոգենադիս կը կատարուէր հայ մտքի զգաստակաւոր ժշակներու հոգիներուն համար, Ս. Միւրով հայերէն ատակրու գիւտավ Հայ Մշակոյթի հրմադիրը ըլլալուն:

Շարաթ տօն է Մերոցն՝ Տրդասայ բազաւորին մերոյ և Աւելին տիկնոցն եւ Խոսրովիդիսոյն: Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնը հաշակող վեհապետին հետ իր որինովն ու քրոջը յիշատակութիւնը հասկնալի է ինքնին:

Կիրակի տօն է Գիւտի Տփոյ Ս. Աստւածածնի: Նկատելի է որ Կաթոլիկներ, որոնց մաս այնքան բազմաթիւ են Տիրամար հումիրուած տօները, չունին այս ինչպէս նաև Գիւտ Գոտույ տօնը: Մինչ Յոյներ, սրոնք կը նշեն զայն 2/15 Յուլիսին, ոչ մէկ հանդիսութիւն ունին եսս այդ օր: Մերոնք, ինչպէս Սուրբ Կոյսին նույնիրուած միւս տօները, այս ևս կը հանդիսաւորին Գեթսեմանիի Ս. Աստվածածնայ Տաճարին մէջ, Տիրամար Ս. Գեղեցմանին վրայ մատուցուած Ս. Պատարագով, ի ներկայութեան եպիսկոպոսուզ մը գլխաւորուած Միաբանութեան և Ժամանակաւոր գպիրներու:

Երկուշաբթի տօն է Կայիսերատոսի եղիսկովորին եւ Խառսուն եւ ինն Վկայիցն եւ Պունիկիստոսի Խահանային: Կարիստրատոսի յիշատակը Պոյնք կը տօնին Սեպտ. 27ին (10 Հոկտ.), իր ըսկերներով միաւ սին: Ղաւնկիանոս, զոր սմանք սիալմամբ կը գրեն Ղաւնկիանոս, քահանայ մըն է և ոչ թէ Պրիստոսի կորը պէտով խոցող Հովովմայեցի հարիւրապետը:

Մեծ և պատուական երկոտասան կասմեզոք և եղին յիշատակ՝ ՚ի Ս. Վանս, և զի մի գուցէ վնասնեցի կամ վաճառեցի յանխիղն արանց՝ փափակեցան թողուէ զայն յիշեղեցւոց Ս. Ամսածնայ Քաղաքին, որ մինչեւ ցայմմ կայ և մնայ: Ունէին սոքա ՚ի Ս. Վանս և 40 կանթեղարձաթեայ, որպէս ցուցանուէ 81 անձանց ստորագրեալ գիր կոնդակին: բայց այժմ և ոչ մին երեկի: Առին և առա մի վասն իւղի կանթեղաց 200 գանեկանի: Ե եղին յիշատակ՝ ՚ի Ս. Վանս, որ է հանդիպ Մենաստանին յարձմանց կուսէ Մերճ լուսաղերն՝ որ ցարդ կայ և մնայ: Յաւուրս

յայսոսիկ (Ծմէկ՝ = 1715) հրգեն մեծ անկառ ՚ի բազագիս և զմեծ մասն կրպակաց Շուկային այրեցաւ ՚ի 15 Փետրուար: Յայսմ ամի եկն և կարկուտ սաստիկ և մեծամեծ ՚ի 14 Յունիսի, և ենար զարտօրայն և զծառս ՚ի բազում տեղիս: Կեցեալ յԱթոռ Առաջնորդութեան Աստվածատրայ Արքական ին թմբիսւկ կոչեցելոյ ամո իբրև 20 և ամիսս ինչ, և ժամանեալ զրաւ կենցան փոխեցաւ առ Քրիստոս և Բաղեցաւ ՚ի Ս. Մենաստանիս առաջի դրան մեծի եկեղեցւոյն, ՚ի 14 Յուլիսի ՈւձԱ (= 1722):

¹ (Տարօւմակելի՝ 8)

Երեքշարթի տօն է Զամարիայի մարդաբանութիւն, Երկու Զաքարիաներ գոյութիւն ունին, Մէկը մաս կը կազմէ և Երկուտասուն և կամ փոքր և մարդարէից խումբին, որուն կը պատկանի Հին հատկարանի դիրքերին մին, իսկ միւսը հոյրըն է Ցովիանասու Մկրտչին, զոր Հրեայի պատճենեցին ընդմէջ Ցամարին և սեղանոյն, և զոր կոչուած է ուրդի Բարաքեայց Հարց կը ծագի թէ ս՞ր մէկն է յիշեալը Եթէ, առաջին է, ինչո՞ւ այս բացառութիւնը, քանի որ մատելակ մհատանէն ոչ մէկը բացի Ցովիանէն, իր բացառիկ հանգամանքին համար, այս ալ իրեն յիշատակութիւն միայն և ոչ իրեն որբոց տօն և ունի իր առանձին յիշատակութիւնը, իսկ եթէ միւսն է, ան արդէն կը տօնուի Վերափոխման հետ կապուած տօներու շարքին, նզեկիէ և եղբ (Եղբայր) մարդարէներու հետ միասին:

Առաջին Զաքարիայի առանձին յիշատակութիւնը չհանդիպեցանք օտար Տօնա, ցոյցերու մէջ:

Հինգշարթի տօն է Եղիսակի մարզարէին: Արժանաւոր աշակերտը Եղիս մարդարէի, զոր այլ Եղիկեցիներ կը յիշատակէն 14 Յունիսին:

Շարոթ տօն է Երկուսասն առանձիւցն Քրիսոսի Երեխասաներու առաքելութիւն: Մեր Եղիկեցին այնքան բարձր արժենորած է քարոզչական աշխատանքը և Հեթանոսաց Առաքեալոյին, որ զինք 12 տառքեալներու կարգին է գտնած, զայն անուանելով 13րդ առաքեալու: Օտարներ տասներկութը կը յիշատակէն 30 Յունիսին, Պետրոս և Պողոս Գլխաւոր առաքելոց տօնի վազորդայնին: Երաւաղէմի մէջ տօնը ունի իր նախատուակը: Իսկ Սուրբ Պատարագը կը մատուցուի Մայր Տաճարի Ա. Պօղոսի վերին մատրան մէջ:

Կէսօրէ յետոյ, «Առոք ես ուերգեն եսք կ'երգուի Առաքելոց յատուկ և ի գեն հայցեմքը, առաջին անգամը ըլլալով ամիսներէ ի վեր (և երբեմ առաջինը տարւոյն մէջ):

Դ Կիրակի Բարեկեննան և Վարդապահ պահոց: Կը յաջորդեն Հինգ պահոց օրեր:

Շարաթ Յիշատակ է Ցապանակին հնոյն եւ Տօն նորոյն Ա. Սկեղեցւոյ, Միայն մէնք

է որ աւնինք այս տօնը, որուն նախատանիկ ալ կը կատարենք ևոս Մայր Տաճարին կից (Նարաւակոզմը, Երեք դարեր առաջ շինուած) Ա. էջմիածին մատրան մէջ, ուր կը մատուցուի Ա. Պատարագը Շարաթ առաւտա: — Տապանակը ձերից մեծագոյն սրբութիւնն էր, ուր Ցանացանեայէն զատ կը պահուէին այլ որբազան առակները, իսկ Եղիկեցինը, իրեն Թիրատոսի հարաց, կ'անձնաւորէ բովանդակի որբութիւնը քրիստոնէական կրօնին:

Յաջորդ որ Տաղաւար Տօն ըլլալուն, Նաւակատիք է այդ օր:

ԱՐՄԵՆԱՎԱԼ (Այլակերպուրիւն կամ Պայծառակերպուրիւն Ցեանի): Խօսած ենք այս մասին հանգամանորէն և Մինչեւ 1978 տարուան Ցուլիս-Սեպտ. միացեալ թիւի մեր Ամբագրականին մէջ: Թիրատոնէութեան մեծագոյն տօներէն մէկն է ան, զոր բոլոր այլ Եղիկեցիներ կը տօնակատարին Օգոստոսի 6ին: (Արեկելեան Եկեղեցինք զայն կը տօնեն ևս նոյն ամսոց 19ին:) Առեն մը մենք ալ նոյն օրը կը տօնէինք զայն, Բայց երբ ընդունեցինք Տաղաւար տօներու գրութիւնը, և նկատեալով որ անկէ միայն Յ օրեր եաց (15 Օգոստ.) Առքի Տաղաւար մը — Վերափոխուած — կար, յարմար նկատուեցաւ զայն խախտել իր տղին, ետ տանիլ և կտպել Զատկական հաչիւին: Եւ քանի որ Եօթը խորհրդաւոր թիւ մըն է, և ինչպէս որ Հոգեգալւուոց Զատկէն եօթ շարաթներ եաց կը տօնուի, կարգադրուեցաւ որ Այլակերպութիւնն ալ տօնուի այս վերջինէն եօթ շարաթներ եաց (Ընդհանրապէս Ցուլիս ամսուն): Տօնին մեր մէջ ալ առենօք Օգոստոսի 6ին տօնուելուն վերջանաց ֆաստերէն մէկը կու գայ մեր Օրացայցէն, ուր նոյն օրուան գիմաց կը կարգանք. «Ակիզը Աւելիաց ամսու և տարեմուտ Բաւն Թուականին Հայոց Ակնարկութիւնը նաւասարդկան տօներուն է, զոր մեր հեթանոս նախանայրերը կը տօնախմբէին ժողովրդային մեծ խանդակառութեամբ և որմէ մեացած է ներկատ յիս Վարդապահ տօնին իրար վրայ ջուր սրբկելու սովորութիւնը: Հին առանձուոր թիւն մը առաջին կ'ըսէ թէ Այլակերպուր թիւնց պատասխած է մեր Տիրով խաչելու

թենէն քառասուն օրեր առաջ՝ Հայ Երրուստիկ պահած է այս աւանդութիւնը Արտաքսման կիրակիին երգելով Այլա կիրապութեան շաբականներ։ Խակ Լատինք Մեծ Պահոց երկրորդ կիրակին նույիրած են մեծ այդ գեպքի յիշառակին։ Տօնին դեպի ամառ տեղափոխութը կ'երեւի թէ եղած է տւելի ուշ, արուած լլլալով որ այդպիսի կարեւոր և ցնձառուիթ տօն մը դժուար է հաշանցնել Մեծ Պահոց մթնուլորտին նետ, ուր խոկումի, զղջումի ու ապաշափի խորհուրդն է տիրակոն։ Աւոտի տօնը փոխադրուեցաւ փախանակ խաչելութեան գեպքէն (Աւոգ Ուրբաթ)՝ Վերացման Ս. Ասէի տօնէն (14 Մելու.) քառասուն օրեր առաջ, այսինքն Օգոստ. 6ին, ինչպէս կը զկայէ մեր Յայսմաւուրքը։

Վարդապալ Սուրբ Աթոռոյա համար ունի բացառիկ նշանակութիւն, քանզի, ըստ աւանդութեան, Ս. Յակոբոս Տեսունեղայր առաքեալ այս տօնին է որ բարձրացած է Աթոռ, իրեւ առաջին Պատրիարքը երսաւազէմի։ Այդ պատճառաւ, նարաթ օր կը զարդարուի Տեսունեղայր Աթոռը, իսկ ատեն մը սովորութիւն կար որ Կէսօրէ եռք, Ս. Աթոռոյա Գահակալը Շնորշափուազ մոււաք դործէ Մայր Տաճար, ուր նախատօնակէն եռք կը կատարուի մասնաւոր արարողութիւն («Յաղթող դաւա» և կցորդ շաբականներու երգեցողութիւն, յարեւաման Դաւթի և Յակոբայ տօնի նախօրեակին)։ Յետոյ Պատրիարքարան կը բարձրանան Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ։ Իրիկնադէմին Ժեկեսցէի և Հայկան կարգեր կը կատարուին, իսկ Կիրուկի առաւտօն հանդիսաւոր Ս. Պատարագ կը մասուցուի Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Ասեն կոր, որ երեկոյեան ժամերգութեան աւատին կատարուէր ընթերցումը Ս. Եղիշէ Վարդապետի Այլակերպութեան ձարին։

Հնդհանրացած սովորութիւն մըն է Ս. Աթոռոյս մէջ այդ օր կատարել քառանայիկան ձեռնադրութիւն, թէև կարգ մը տեղեր Հոգեգալուստք աւելի յարմար նկատուած է, Ս. Հոգեւոյն հեղմամքը ստացուած և ձեռնադրութեան պատահ չնորհներան յարակութեան կամ համգիտութեան համար, բայց Այլակերպութեան

խորհուրդն ալ գիւրաւ կը ներդաշնակուի Զենադրութեան խորհուրդին հետ, որ ենթական հոգեւոչն այլակերպելու առիթ ու շնորհ է միանդամայն։ Թոգ թէ ընծառեալները ընդհանրապէս ուսանողներ ըլլալուն, կատարած չեն ըլլար գիւր իրենց աւարտական քննութիւնները Հոգեւութասեան տօնին։

Արեւելեան նեղացիներէն մէկ քոնին (Յոյն - Օրթոսուք թէ Կաթոլիկ - և Ասորի) այս տօնին կը կատարեն Խաղողի օրնութիւն։ Յոյնք զայն կը կատարեն Գեթիսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարէն ներս, յետ ՀՀրաշափառուազ մոււաքի և եւպիսկոպոսական Պատարագի, բայց անոնց արարողութիւնը հազիւ քանի մը նախագառութենէ կը բազկանայ։

Այլակերպութեան վայրը քրիստոնէւրեան վաղեմի գարերէն սկսեալ նկատուած է Թարոր լեռը։ Գոլիքիոյ նահանգին մէջ, ոչ շատ հեռու Խաղորէթէն, թէ Լատիններ և թէ Յոյներ փառաւոր սրբարաններ ունին լերան կատարին, ուր 6 և 19 Օգոստոսին կը կատարուին մեծաշուք հանդիսութիւններ։ Բաց աստի, ակնոյս Ֆրանչիսկաններու Մայր Տաճարն ալ կառուցուած է Այլակերպութեան անունով և Աւագ Սեղանին ետին կ'երեւ Այլակերպութեան մեծաղիր նկարը։

Վարդապալ Յունաց մօտ Ս. Կոյսիր Վերափոխման պահոց մէջ ինյալուն, նաւակատիք կը բռնեն այդ օր, նախընտրելով ձուկի գործածութիւնը։

Տօնը մեր մօտ ունի հոգրեայ տեղութիւն, իրեւ Տաղուար Տօն, Երկուշարթին նուիրուած է Մեռելոց յիշատակին։

Հինգշարթի տօն է նայիեալ մարգարիին։ Հին Ուլիսիտ մեծագոյն մարդարէութեան գորքին հնդինակն է եսայի, պայշանամաքուրը որակուած մարգարէն, որուն ընթերցեալները ամենէն յաճախակի կերպով կը կարդացուին մեր Եկեղեցու մէջ։ Լատիններ Յ Յուլիսին կը յիշատակին զայն, իսկ Յոյներ՝ 9/22 Մայիսին։ Մեծ այս մարդարէին անոնց մեր մօտ կը փակուի երկար չարքը Ս. Զատկի հետ կապուած տօներուն։

(Եաց.՝ 9)

Գ. Ճ.

ԻՆՔՆԱԿԵՆԱԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՐՈՎԱԲԵ ՎՐԴ. ՍԱՄՊՈՒԷԼԵԱՆԻ

1894 Յունիսար 7, Ուրբաթ, ողջութեամբ Երևաղէմ վերագրձաւ կ. Գոյսէն Յ. Յարութիւն Պատրիարքը իրեն հետ եկան նու Տ. Մկրտչի Արքեպօս Վեհապետան (Երբեմն Առաջնորդ Առանայի) իր աքսոր, նու Տ. Գէորգ Շ. Վրդ. Երեցեան, Այս վերջինը քանի մը շարաթեն վերագրձաւ ի կ. Գոյսէն, ուր կը վորէր Երևաղ զեմի Փոխանորդին օգնականի պաշտօնը:

Երևաղէմի մէջ աքսորական Տ. Եղիշիկ և Տ. Մկրտչի Եպիսկոպոսներ ազատ ուեցան և 1895 Մարտ 15/27 Դշտ մէկնեցան Երևաղէմէն գէպ ի կ. Գոյսէն:

(Մկրտչի եպս. վախճանեալ ի Մարտ 1910, Մայիս 22ին, Եղիշիկ եպս. վախճանեալ կ. Գոյսէն, 1913, Փետր. 26):

Նոյն ապրին (1895 Նոյ. 7, Գշ.) Երևաղէմ եկաւ իրեն հրեա Զեյթունցի Տ. Կարապետ եպս. Քէչէսան, ոյք բարերարոյ և ազնիւ:

1896 Փետր. 10, Շարաթ գիշեր, Երևաղէմ աքսորաւեցաւ Կարնոյ Առաջնորդ Յ. Հետնդ եպս. Ծիժանեան և բնակութեան համար Բերդինէմ զրկուեցաւ:

Սարկաւագութեան երկար ապրիները անցացի Ս. Յակոբի Վանքին մէջ, Տէյրմէն-Թազ անենակի մը մէջ:

Վարժարանէն ելլիեւս յետոյ, Փեր Գևոններու Ս. Յովակիմ-Աննոյի վանքին մէջ երեքն ինձ Ֆրանսերէն գառ կու առ նոյն միաբանութենէն Փիէս Գաբրորէ անունով վարդապետ մը, որ վանցին մէջ միանդամայն երաժշտութեան և նուագի նուացի երա:

Նոյն միջացներուն Երևաղէմ կը գտնուէր Դամինիկեան վարդապետ մը՝ Փիէս Ժագ-Ռէնորէ անունով, որ երկար ապրիներ Արեւելք (Մուսուլ, Վան և լին.) գոնըւած և ըստ բաւականին սովորած էր արեկելեան լիզուներ - Հայերէն, Թուրքերէն, Արարերէն, Սըրայերէն, Մասնաւորաբար յարարերութեան մէջ էի ոյզ վարդապետին հետ:

Մեր Միաբանութենէն ներս ամենէն ժամերիմ էր Տ. Եղիշէ Վրդ. Զիշինկիրեան:

Պուլկարիոյ Ռուսնութ քաղաքին մէջ բարեկամ մը աւնէի, Նշան Մարգիսեան Թորոսնեց անունով: Անոր հետ յառաջուց թղթակցեցանք և ամէն ինչ կարգագրեցինք: Նա զիս իր անձնական ծախսով ժընէվ համալսարան մը պիտի ցըկէր: Այդ համակը ներկայացուցի Յարութիւն Պատրիարքին և Տնօրէն Ժողովին: Հետևաբար արտօնութիւն տուին ինձի գնալու ժընէվ: Միայն թէ ժամանակի քաղաքական կառութեան պատճառու, իրենք պաշտօնապէս կամ արտաքնապէս զիտիսի զիտնային իմ (ժընէվ երթալս, ոյլ կ. Գոյսոյ համար անցագիր պիտի հանէի և վզդիրէն - էրը թէ - պիտի մէկնէի գէպի Մարսիլիա:

Այս ամէն ձևակերպութիւնները կատարելէ յետոյ, 1896 Մայիս 21, Գշ. առաւազոյ, մէկնեցայ Երևաղէմէնին, ինձ սւզեկից էր Մանիսացի Կարապետ Գոլճեան (յետոյ Տ. Յակոբ Քէնչ.) առուն Միաբան մը, որ Ժառանդաւորաց Վարժարանի կառավարչութեան պաշտօնէն և Միաբանութենէն նոր Երաժարած էր: Եպս. մը (Զեյթունցի Կարապետ Մըրազան), վարդապետներ, արկաւագներ, գպիրներ և միաբաններ մինչև կայարան ողջերթի եկած էին: Յու կէս ժամէն հասանք Ցոպպէ: (Հոգեկառով), ուր օդափոխութեան առթիւ կը գտնուէր, Տ. Յարութիւն Պատրիարք և կառավով), ուր օդափոխութեան առթիւ կը գտնուէր, Տ. Յարութիւն Պատրիարք և

աեղույն տեսուչն էր Տ. Գրիգորիով Վրդ. Պօյանեան. Ա. Պատրիարքը, որ անկազնոյ մէջ կը մնար, զիս իր ներկայացմանց ինցունեց և մէկ ժամու չսփ զանազան գէպացեր պատմեց իր յեմերիկա և յայլ տեղիութքուն աւզեւութիւններէն, և Մնաք բարովց ըսինք Տեսչին, Ժամարար Տ. Մկրտչի Վրդ. Մարդարեանին, հիւր Յովհաննէս Վրդ. Խիկցեանին, Յովաէփ Վ. Սոզամնեանին և Միարածներուն և յոյն օրը նըստանք Աւատրիական Լոյսի ընկերութեան էխութեան շոգենաւը, որ (ը. Բ.) ժամը 10ին մեկնեցաւ Յօվաէփի նաւանանդուտէն և գիշերուան ժամը 2ին հասանք Հայֆա, բայց դուրս չելայ - շագենաւը շամու չսփ մնաց Հայֆայի տաշի և յետոյ ճամարան շարունակելով առաւտուն կանուխի հասանք Պէյրութ. Առաջին անկամ կը տեսնէի Սուրբիոյ համբաւաւոր նուահանդիսուր, կուրս ելայ և աւզակի ազգային վանքը գնեցի; Առ անշաշական պատմոն կը վարեր Տ. Մատթեոս Վրդ Գայրցնեան, յետոյ այցելեցի մի քանի ճանօթ ազգայիններու առանձին և Մթերանոցները և կեսորացի Համբաւաւոր էփ. Մոսերեկանի ընկերակցութեամբ կացինք «Քըստըւթէ» անուամբ ճանօթ անտառակըր, և երեկոյեան գէմ շոգենաւ կերպարձայ, առ ուշ ատեն մեկնել զով առաւն կառաւի Թարապալուս (Շաման), ուր երկու ժամ մնացինք, բայց դուրս չելայ - Շագենաւը նոյն օրը մեկնեցաւ և կէսօրին հասու իսկէնտէրուն, Դուրս ելլելով տեսակցեցայ տեղույն Հովի Տ. Ներսէս Վրդ. Գայիէկեանի հետ և մի քանի կեսարացիններու (Մ. Կիւլպէնկանի և Թ. Քէշիէկանի) մթերանոցները այցելեցի: Նոյն երեկոյ մեկնեցանք իսկէնտէրուն և հետեւաք առաւս հոսանք Մէրսին (Մայիս 24, Ուրբաթ):

Յօվաէփէն առմասակա թէպէտե իզմիրի համար առած էի, բայց շոգենաւի մէջ առապայման բազմութիւն կար, որոյ հետեւաք անհանդասութիւնն է Մէրսինի հայրենակիցները տեսնալու վափաքը մղեց զիս Մէրսին դուրս ելլալու, թէպէտե խոնեմութիւն չէր, որպէսուե հայկական ինդրոյն առենէն դէմ միջոցն էր և ես իրը երիտասարդ և կրօնաւորի տարապակս ուղագրութիւն կը հրաւիրէի իմ վրաս. Բաւական դժուարութեամբ (իրը հիւանդացած) դուրս ելայ և հիւրընկալուսեցայ ընիկ թուլացի Յարութիւն Աղա Մթանպօլեանի առժամեաք ընակարանը Յարութիւն Աղա բաւական բարեկեցիկ էր և լու գիրք ունէր Տարսոսի մէջ: Այն օրերը կատորածի վախէն, ուրիշ ազգոյիններու նման առժամապէս Մէրսին փսխագրուած էր, ուր համեմատաբար աւելի պայանզութիւն կար: Յիշեալ ազգայինը 1909ի Կիլիկեան կառորածին ի Տարսոս իր առ մէջ սպաննուեցաւ:

Մայիս 25, Եր. երեկոյ և կիր. 26 Մայիս (Տօն Եկեղեցւոյ), Մէրսինի Ա. Գր. Լուսաւորիչ Եկեղեցին արարազութեան ժամանակցեցայ և շատ մը Թալասցիներէն զառ այցելեցի նաև Մէրսինի էփ. Սէլենանին, որոյ երկու երիտասարդ զաւակները (և իմ դպրոցական Թալասի ընկերներու) Միասք՝ 27 տարեկան և Յարութիւն՝ 25 տարեկան, նոյն օրերը վախնանած էին - առաջինը Մէրսին, երկրորդը Կ. Պոլիս - , ի խոր սուր համակելով իրենց ծնողքը:

Հետաքրքրութեամբ և մի քանի ծանօթներու և բարեկամներու այցելելու փոփաքանօք և անխոնէմութեամբ Մէրսինէն (կիր. օրը) շոգենաւովով ճամբարայ ելայ դէպի Տարսոն, ուր կը գտնուէր մէկ Սաղիմական բարեկամս, Մամուէլ էփ. Արիկեան (ընկէ Ատանացի): Քաղաք հասնելով՝ պատահմամբ, թաղոքականաց ժողովարանը ժամայ, ուր պաշտամունք կը կատարուէր, ուր հանդիպեցայ Սամուէլ էփ.ի: Նոյն երեկոյ հիւրընկալուսեցանք իր տունը, ուր իր նոր ամուսնացած եղբօրը (Նազարէթի) հետ միասին կը ընակէր և եղբօրմէն մառանէօպութիւն կը սորզէր: Հետեւեալ օրը Սամուէլ էփ.ին հետ միասին սկսանք շրջագայիլ զանազան եկեղեցիներ և դպրոցներ, ինչպէս նաև Հայոց նշանաւոր պատմական գերեզմանատունը, որ ըստ հմանց իր մէջ կը պահ Սարդանարազի շիրիմը են:

Երկու երիտասարդներու հետաքրքրական պայտաները տեղական կառավարուական ուշադրութիւնը հրաւիրեցին մեր վրայ, և ես Գրաւիրուեցայ կառավարութեան

գուշը, ուր նախ փօխս առյօթեսին և յեղաց Գայմագամին առջև երկայնապատճեն հարցաքննութեան ենթարկուեցայ, և պատուաւոր երաշխաւոր մը տալով մեկնեցայ կառավարչատառնէն: Հետեւալ օրը Մէրսին զերադասնալով, թալասցի Գանձապետեան Մ. Գարբրիէլ էֆ.ին տունը մնացի և յաջորդ տաւած, ընդ հսկողութեամբ փօխսի մը, շաղեկառով մեկնեցայ գէպի Մէրսին և առաջնորդուեցայ ուղղակի կոռագարաքթեան գուշը, ուր շարունակուեցան Տարոնի երկայնապատճեն հարցաքննութիւնները փօխս առյօթեսին և միրեկարևմ փաշայի ներկայութեան և վրաս խուզարկուեցաւ: Ենոյ կեսարացի պատուաւոր ազգայինի մը երաշխաւորութեամբ ազտա արձակուեցայ, առաջին շողենաւով քաղաքին մեկնելու պայմանաւ:

(Այստեղ փակագծի մէջ ըսեմ, թէ Երրապայէն զերագարձիս իզմիր երբ բանադարկուեցայ, կառավարութիւնը գրաւեց բոլոր թուղթերս և տեղակներս, որոնց մէջ էր նաև ուղենորութեան օրագիրը:)

Թանի մը օր միայն մետքի Մէրսին և առաջին պատահած շողենաւը — Տէլլէնական, «Էլզմիր» — մտայ: Շոգենաւը պղտիկ էր և բազմութիւնը յատ: Ճամբորդներու մեծագոյն մասը կատագած և կոտարածներէն նոր գուրս ելած տաճիկներ էին, Առաջին օրէն ևս ինքզինքս Յոյն ձեւացուցի: Բովս յունացիր թուրքերէն Յովսէփ Գեղեցիկի պատմութիւնը կար, շարունակ զայը կը կարդայի:

Շոգենաւը Մէրսինէն մեկնեցայ և հետեւալ առաւտ իսկէնտէրուն հասաւ: Ուր գուրս չելայ: Նոյն երեկոյ մեկնեցանք իսկէնտէրունէն և առանց Մէրսին հանդիպելու՝ երկու օրէն հասանք Աստալիս, ուր օր մը մնացինք և Գանիայի կուսակալութիւնէն բազմաթիւ թուրք ճամբորդներ հասան:

Մեր շոգենաւը եօթը օրէն ողջութեամբ հասաւ իզմիր:

Ես ուղղակի Գարաթաղ զնացի և հիւրընկալուեցայ մեր հեռաւոր ազգականներէն Արթին Աղա Խմբիկանի տունը:

Մէկ շաբաթի շափ իզմիր մեղէ և Առաջնորդին (Ներսէս Ռ. Վ. Արսլանեան) և զանազան հաստատութիւններու մօտ կենալէ եսք, Ֆրանսոսկան շոգենաւը մեկնեցայ և երկու օրէն ողջութեամբ հասայ կ. Պոլիս և տամաք ելայ Ղարաթիա, ուր նաև ամսատուցին մէջ պաշտօնեալ մը տառ անցագիրս և նուժուսի թուղթս և նշանակեց բովը թէ մուր պիտի ընակիմ: «Փուլմաքրու», Պատրիարքութանի քով երաւազէմի Փոխանորդարանը դրել տուի, հետք կորսաննելու համար:

Գրեթէ երկու ամիս մնացի Գոտու-գիւղի: Այդ միջոցին շատ քիչ անդամ գուրս կ'ելէի: Հազիւ երկու անգամ Պոլսոյ կողմը անցայ: Մի անգամ շոգենաւին մէջ հանդիպեցայ Մէլքոնէթէկ Արքեպոս: Մուրատեանին և կէս ժամու շափ տեսակեցայ հետք, մինչև որ կամուրջը հասանք (այն միջոցին Գատը-գիւղի քարոզիչը Մամբրէ եպա-ն էք):

Օգոստ. 14, Դշ., պատահեցաւ Օսմ. պանքայի գէպքը, որոյ բոլոր մանրան մասնութիւնները հասան մեզի նոյն երեկոյ: Բազմաթիւ հայեր ապաստանեցան օտար հասաւառութիւններ, օրինակ՝ Գատը-գիւղի Լատինական եկեղեցին և Ֆէնէրպահէկի հասաւառութիւններ, Ֆրէնսինը դպրոցը ելն: Բայց Տէլի Ֆուտա Փոշան պաշտպանեց Ակիւտարը և Գատը-գիւղը և այն կողմերու հայերը շվասաւեցան:

Ֆէնէր պախչէն դիմեցինք թէ ինչպէս Մարսիլիտ երթալիք Ֆրանսական (Մէսամբըրիի) շոգենաւը մեր կողմը եկաւ և Գալամըշի առջև խարսիսց, ուր յեսոյ (Մէսամբըրիի) շոգենաւը մեր կողմը եկաւ և Գալամըշի առջև խարսիսց, ուր յեսոյ Այս պարքը և պատահեան պանքան մտնող Դաշնակցական հայ-յեղափախականներ: Այս պարքը գրգռեց Սուլթան Համբիրին կատաղութիւնը ապրոբախտ հայ ազգին դէմ:

(Նարունակելի 3)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

“ԱՆՄԱՏՁԵԼԻ ԲԱՐՁՐԻՆՔՆԵՐ”

և

“ՄԻԳԱՄԱՍ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ”

Հեղինակ՝ ՀԱՅԱ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ամերիկայի և Պէյրումի մէջ գրի շարժող և սփիւրացահայ մեր գրական ածուն պատաստակող քանի մը հեղինակներու գործերը ուսումնասիրելէ և այդ առթիւ մեր պատառութիւնն ու զիյուը որձանգրելէ ետք, այս անգամ մեր տէնարկը կը դարձնենք գէպի հարաւ, նես զայի ափիրը, ուր տեսն մը ապրուծ ու սուղծագործած են մեր գրական ընտրանին համարուղ ականուար դէմքեր։

Ձոյզ հասորները լոյս տեսած են «ՅՈՒՆԻ ԲՐԱՅԵՐԸ» պատրանէն։ Անսնցմէտ տապաջինը 68 էջերու վրայ տարածուած վիպակ մըն է, սիրային ենթանողով, իսկ երկրորդը՝ 12 պատմուածքներ, 140 էջերու վրայ երկարագուած։ Առաջինը լոյս տեսած է 1979 ին, իսկ երկրորդը՝ 1980-81 ին։ (Հաս ալ անհեթեթութիւն մը. հասոր մը միշտ կը կրէ տարեթիւը լր լոյս տեսած օրուան։ Ինչպէս հանդուրժել գոյութիւնը զայդ տարեթիւերու։) Կոտորներէն ոմանց անթօւական են, ուրիշներ ունին մօտ կիսադարեան հնութիւն։

Մօտ կէս զարէ ի վեր կը բանի Պր. Պօղոսեանի գրիչը, և սակայն, հակառակ իր կարած երկար ճամբրուն, չէ յաջողած հաստատ ու ապահով տեղ մը յարդարել իր սիրոջ՝ Հայ Գրականութեան ածուէն ներս։

Սիրավէպ մը չէ որ կը մատուցուի մեզի վԱնմատչէլի Բարձունքներով, այլ սիրային պարզ արկածախնդրութիւն մը (որուն նմաններուն յաճախ ականջալուր կ'ըլլանք մեր տաօրեայ կեանքին մէջ), որուն եւ (ըստ վիպակին միշտամասէն իսկ դուշակիլի է ընթերցողէն։ Ասորուած ու մերժուած ուր մը ու միտքս կ'երթայ Յովհաննու Աւետարանը փակող էջերուն,

ուր Սիրոյ Առաջեալը՝ կը յայտնէ թէ եթէ Թիրասոսի բոլոր ըրածներն ու իսկ սածները գրի առնուեին, աշխարհին փոկ նեղ պիտի գոր ընդգրկելու այդ բոլորը։ Ու կը տարգրիմ ժամանելու, թէ ինչ վիր նակի պիտի ժամանուէին մեր հրատարակ կէներն ու գրաշարները, եթէ ամէն դրիւ բաներ և ոչ գործածելի — կրցող անհատ յիմարակթիւնը ունենար թուզթիւն և ապա ապարանին յաճանելու իրակրային կեանքը — և ովք չէ ունեցած ուղարք այդ — այլազան փուլերը։

Անկեղծ ըլլալու համար պէտք է խօսավանիլ թէ պատմուածքները, որոնք իրենց իրեր յետագետին ունին նշեանք յաջարդող առաջին քառարդ գարը, գայ, թակուններու և որրերու իր կարաւաններով, այնքան ալ անարժէք չեն։ Սակայն այսպիսի պարագաներուն, մեր ինչ ըսիւ լին ուելիք զայն ինչպէս ըսիւն է կարեւոր։ Պօղոսեանի մօտ գրեթէ բացակայ է արաւետը, ներքին այն հուրթը, հրաշտագործ ալիմին, որ կը կենսաւորէ փայլատ մեր ասղերը, գործնելով զանոնք բարախուն ու ասինքնոզ, եթէ ոչ՝ ինչ ասելիք դիւրին քան աման պատմումը, նոյնիսկ կուտակումը չոր ու ցածաք և թէկուզ զեն ու վաեմ — գաղափարներու։ Զմանալ որ Պատմուածքը կարեւոր մէկ թւն է Գրականութեան, որ իր կարգին մէկն է Արուետակի մէծագոյն սեւերէն։

«ՅՈՒՆԻ ԲՐԱՅԵՐԸ» յարաւան ընթերցող մը չենք եղած, Աւոսի չենք գիտեր թէ Պօղոսեան, բացի յիշեալ գործերէն ունի՞ հատորի չժամած ուրիշ լոդաւածներ։

Աւելորդ է խօսիլ ապագրութեան մասին, Սանօթ է մեր ընթերցող հասարակութեան նգիպտոսի մեր այժմու մամուլին լողեալիք վիճակը։

